ԴԵԲԻՏ ՔԱՐՏ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

BYBLOS BANK ARMENIA

+374 60 61 61 00
byblosbankarmenia.am

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տվյալ ամփոփաթերթում ներառված սակագներն ու պայմանները կարող են փոփոխվել: Բիբլոս Բանկ Արմենիայի կողմից տրամադրվող դեբիտ քարտերի և Բիբլոս Օնլայն ծառայության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք զանգահարել +374 60 61 61 00 հեռախոսահամարին, այցելել Բանկի պաշտոնական կայք՝ byblosbankarmenia.am, կամ դիմել ցանկացած մասնաճյուղ:

Մեր մասնաճյուղերը տեղակայված են հետևյալ հասցեներում.

- Աբովյան 6, Երևան
- Ամիրյան 18/3, Երևան
- Կոմիտաս 38/2, Երևան
- Բաղրամյան 84/1, Երևան

Դուք ունեք Բանկի հետ հաղորդակցվելու իրավունք ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. «Ձեր ֆինանսական տեղեկատուն» (fininfo.am) ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգն է:

Հրապարակված՝ 12/2025թ.
Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԴԵԲԻՏ ՔԱՐՏ

Դեբիտ քարտ կարելի է պատվիրել առցանց՝ Byblos Mobile հավելվածի միջոցով, կամ այցելելով Բանկ և լրացնելով քարտի ստացման դիմումը:

Ձեր քարտը պատրաստ կլինի ստացման 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Իսկ եթե դեռ Բանկի հաճախորդ չեք, կարող եք ներբեռնել Byblos Mobile հավելվածը, գրանցվել առցանց և պատվիրել քարտը առանց Բանկ գալու:

Ձեզ տրամադրված Arca/Mastercard դեբիտ քարտերով իրականացրեք շուրջօրյա բանկային գործարքներ՝ կանխիկացում, քարտային հաշվի ստուգում, անհպում վճարումներ, օնլայն գնումներ և այլն:

1

ԵՐԲ ՈՒ ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՔԱՐՏՍ

Բիբլոս Բանկ Արմենիայի կողմից Ձեզ տրամադրված դեբիտ քարտը կարող եք օգտագործել շուրջօրյա, շաբաթը յոթ օր:

Ձեր քարտը կարող եք օգտագործել բանկոմատներում գումար կանխիկացնելու, վաճառքի կետերում օնլայն կայքերում գնումներ/վճարումներ կատարելու, ինչպես նաև Օնլայն Բանկինգի միջոցով տարատեսակ գործարքներ իրականացնելու համար, այդ թվում՝ հաշիվների մնացորդի ստուգում, դրամական միջոցների փոխանցում, հաշվի քաղվածքի դիտում, հաշվի վերաբերյալ տեղեկանքի կամ քարտի վերաթողարկման դիմումի ներկայացում, տարադրամի փոխարժեքի դիտում՝ այլն:

Arca/Mastercard դեբիտ քարտերի օգնությամբ կարող եք գումար կանխիկացնել՝ օգտվելով բանկոմատների ու կանխիկացման կետերի լայն ցանցից ՀՀ ողջ տարածքում:

Mastercard-ը սպասարկվում է նաև արտերկրի ցանկացած բանկոմատում և միլիոնավոր սպասարկման կետերում, որտեղ առկա է Mastercard ապրանքանիշը:

Այսպիսով՝ Դուք կարող եք ընտրություն կատարել տեղական (Arca) և միջազգային (Mastercard) քարտերի մեջ:

ԻՆՉ ԱՅԼ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՄ

Բիբլոս Բանկ Արմենիայի կողմից Ձեզ տրամադրված Arca/Mastercard դեբիտ քարտն ընձեռում է հետյալ լրացուցիչ առավելությունները.

- **քարտի փոխարինում.** վնասվելու կամ գողացվելու/կորելու դեպքում Բիբլոս Բանկ Արմենիան քարտը կփոխարինի նորով,
- **քարտի ակտիվացում.** քարտի տրամադրումից հետո 1 բանկային օրվա ընթացքում,
- **ֆինանսական վերահսկողություն.** Ձեզ տրամադրվող ամսական քաղվածքը* հնարավորություն է տալիս վերահսկելու Ձեր ծախսերը՝ անկախ գործարկման վայրից,
- **օվերդրաֆտի հնարավորություն**. եթե Դուք ՀՀ ռեզիդենտ եք, ունեք լավ վարկային պատմություն, ապա Ձեր դեբիտ քարտը Ձեզ հնարավորություն է տալիս ստանալու օվերդրաֆտ՝ աշխատավարձի մինչև հնգապատիկի չափով՝ Ձեր աշխատավարձը Բիբլոս Բանկ Արմենիա տեղափոխելու դեպքում:

*Եթե Դուք անհամաձայնություն ունեք կապված քաղվածքում արտացոլված որևէ գործարքի հետ, ապա կարող եք բողոքարկել այն 15 օրվա ընթացքում՝ քաղվածքի ստացման օրվանից սկսած:

World Elite™ Mastercard® տեսակի դեբիտ քարտի ձեռքբերման դեպքում կստանաք հետևյալ լրացուցիչ առավելությունները.

- **LoungeKey** ծրագրի անվճար անդամակցություն, հասանելիություն ծրագրի շրջանակում գործող ավելի քան 1,200 օդանավակայանի բիզնես դասի սպասասրահներին, ինչպես նաև յուրաքանչյուր տարի 12 անվճար մուտքի հնարավորություն հյուրերի համար,
- Ինտերնետ կապ 200-ից ավելի երկրում ու տարածաշրջանում ՝ 3 ԳԲ ծավալով,
- Անսահմանափակ անվճար հասանելիություն Fast Track ծրագրին, ինչպես նաև տարվա ընթացքում 12 մուտքի հնարավորություն հյուրերի համար,
- Mastercard Travel Rewards ծրագիր և մինչև 20% քեշբեք՝ World Elite քարտով 500+ հայտնի բրենդից գնումներ կատարելիս,
- 24/7 կոնսիերժ ծառայություն,
- Անվճար ճամփորդական ապահովագրություն, ինչպես նաև անհրաժեշտ բժշկական և իրավաբանական աջակցություն և խորհրդատվություն,
- Հատուկ պայմաններով օնլայն գնումներ կատարելու հնարավորություն աշխարհի առաջատար բրենդային խանութներից,
- **Mastercard®**-ի կողմից պարբերաբար առաջարկվող պրեմիում դասի ճամփորդական առաջարկներից օգտվելու հնարավորություն:

Նշում. Տրամադրվող առավելությունների վերաբերյալ ամբողջական ակտուալ տեղեկություններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով Բանկի պաշտոնական կայք՝ byblosbankarmenia.am, կամ զանգահարելով +374 60 61 61 00 հեռախոսահամարին:

3 ԱՆՎՏԱՆԳ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ և ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Անվտանգության նկատառումներից ելնելով՝ քարտի օգտագործման համար անհրաժեշտ է PIN կոդի կիրառում (որոշ դեպքերում՝ նաև ստորագրություն): Այդ կոդը Ձեզ հնարավորություն է տալիս անվտանգ օգտագործելու Ձեր քարտը կանխիկացման, գնումների վավերացման, քաղվածքներ ստանալու կամ փոխանցումներ կատարելու համար: Հիշե՛ք, որ PIN կոդի մուտքագրման երեք անհաջող փորձից հետո գործարքը կամ Քարտը կարող են չեղարկվել:

Որպես Քարտապան, Դուք պատասխանատվություն եք կրում Քարտի օգտագործման, Քարտի հետ կապված բոլոր կանխիկացումների, վճարումների համար, ինչպես նաև կրում եք PIN կոդի գաղտնիության չպահպանման հետևանքների ռիսկը: Դուք պետք է ձեռնարկեք բոլոր անհրաժեշտ միջոցները Քարտն ու PIN կոդն անվտանգ պահելու համար, հատկապես՝ չգրել PIN կոդը Քարտի կամ դրա հետ կցված որևէ փաստաթղթի վրա:

Քարտով իրականացվող զեղծարարություններից խուսափելու համար, գումար ստանալիս խուսափե՛ք Ձեր քարտի բոլոր տվյալները տրամադրելուց (բավարար է տրամադրել միայն քարտի համարը), ինչպես նաև կասկածելի կամ անծանոթ կայքերից գնումներ կատարելուց:

Բանկը պատասխանատվություն չի կրում Ձեր տրամադրած տվյալների օգնությամբ քարտից այլ անձանց կողմից միջոցներ ելքագրելու համար: Ցանկացած կասկածելի գործարքի դեպքում անհրաժեշտ է անմիջապես կապ հաստատել Բանկի հետ +374 60 61 61 00 հեռախոսահամարով:

Օնլայն գործարքներ կատարելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել կայքի վերաբերյալ առկա տեղեկությունը՝ հավաստիանալու համար, որ կայքը կեղծ չէ: Ձեր կողմից չվավերացված գործարքների ի հայտ գալու հնարավորությունը նվազագույնի հասցնելու համար օնլայն գործարքներ կատարելիս պետք է նախապատվություն տալ Mastercard SecureCode, Arca Secure Pay անվտանգության համակարգերին միացված կայքերին (3D Secure ծառայություն):

Նշված անվտանգության համակարգի հեռահաղորդակցման օպերատորի միջոցով՝ Ձեր կողմից նախապես տրամադրված հեռախոսահամարին ուղարկված SMS հաղորդագրությամբ ստացած մեկանգամյա գաղտնաբառը կօգնի Ձեզ ավարտին հասցնել Ձեր գործարքը: Քարտի կորստի, գողության, զեղծարարության կասկածի, բլոկավորման, բանկոմատի կողմից քարտի առգրավման կամ քարտով կատարված գործարքի ժամանակ ի հայտ եկած այլ խնդիրների դեպքում կարող եք դիմել Բանկ աշխատանքային օրերին ու ժամերին:

Նշում. Քարտի կորստի դեպքում Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում քարտով կատարված այն գործարքների համար, որոնք իրականացվել են մինչ Բանկին քարտի կորստի մասին տեղեկացնելը: Քարտի անվտանգ օգտագործման բոլոր պայմանները Բանկի կողմից Քարտապանին տրամադրվում են պայմանագիրը կնքելիս:

4

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԻՄԱՆԱԼ

Ինչպե՞ս օգտագործել դեբիտ քարտը բանկոմատում

- Տեղադրե՛ք քարտը,
- Մուտքագրե՛ք PIN կոդը,
- Հետևե՛ք էկրանի հրահանգներին:

Որտե՞ղ են տեղակայված Բիբլոս Բանկ Արմենիայի բանկոմատները

- Աբովյան 6, Երևան
- Ամիրյան 18/3, Երևան
- Կոմիտաս 38/2, Երևան
- Բաղրամյան 84/1, Երևան

Ի՞նչ անել PIN կոդի հետ

- Գաղտնի պահե՛ք Ձեր PIN կոդը՝ գողությունից կամ կորցնելուց խուսափելու համար,
- Քարտը և PIN կոդը նույն դրամապանակում մի՛ պահեք,
- Հիշե՛ք՝ PIN կոդի երեք անհաջող մուտքի դեպքում քարտն արգելափակվում է:

Որո՞նք են օվերդրաֆտի տրամադրման դրական և բացասական որոշման կայացման վրա ազդող հիմնական գործոնները

- Վարկային պատմությունը
- Վարկառուի կողմից տրամադրված տեղեկությունների իսկությունը
- Հաճախորդի վարկունակությունը (ֆինանսական կարգավիճակ)
- Հաճախորդի վարկարժանությունը (այդ թվում՝ վարկ ստանալու իրավական խոչընդոտների բացակայություն և այլն)

Որքա՞ն ժամանակ կպահանջվի օվերդրաֆտը հաստատելու համար

Բիբլոս Բանկ Արմենիան օվերդրաֆտի դիմումի վերաբերյալ որոշումը կներկայացնի 7 աշխատանքային օրվա ընթացքում: Վարկը տրամադրվում է հաճախորդի կողմից մասնաճյուղում պայմանագիրը ստորագրելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացվում են:

5 ԻՆՉՊԵՍ ՁԵՌՔ ԲԵՐԵՄ

Եթե ցանկանում եք օգտվել օվերդրաֆտի հնարավորությունից, ապա հարկավոր է ներկայացնել վավեր անձնագիր կամ նույնականացման քարտ, աշխատավարձի/եկամտի վերաբերյալ տեղեկանք, ռեզիդենտությունը հաստատող փաստաթուղթ, եթե այն նշված չէ անձնագրում:

Լրացուցիչ փաստաթղթերի անհրաժեշտություն

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» (Know your customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություն, ինչպես նաև հավելյալ հարցեր տալ Ձեզ բանավոր հաղորդակցման ընթացքում (նման պահանջի առկայության դեպքում):

Համաձայն օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

6 ՔԱՐՏԻ ՓԱԿՄԱՆ/ՎԵՐԱԹՈՂԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Դեբիտ քարտը Ձեզ տրամադրվում է 3 տարի ժամկետով: Դուք կարող եք դիմել քարտի վերաթողարկման համար, եթե ավարտին է մոտենում քարտի վավերության ժամկետը, քարտի տվյալները հայտնի են դարձել այլ անձանց, քարտը վնասվել է, կորցրել եք քարտը կամ մոռացել եք անձնական նույնականացման համարը (այսուհետ՝ PIN կոդ): Եթե քարտի վավերության ժամկետի ավարտին Բանկին չի հաջողվում կապ հաստատել Ձեզ հետ՝ վերաթողարկման ցուցում ստանալու նպատակով, սակայն վերջին 6 ամսվա ընթացքում Դուք քարտով կատարել եք գործարքներ, կամ քարտային հաշվի մնացորդը 10,000 ՀՀ դրամ և ավելի է, ապա Բանկը վերաթողարկում է քարտը:

Քարտի փակման դիմում ներկայացնելիս Դուք պարտավոր եք մարել քարտի գծով Բանկի հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունները և 5 օրվա ընթացքում վերադարձնել քարտը Բանկ կամ ոչնչացնել այն՝ գրավոր հաստատելով այդ մասին: Հիշե՛ք, որ Դուք պատասխանատվություն եք կրում քարտով իրականացված գործարքների համար, եթե այն չեք վերադարձրել Բանկ կամ ոչնչացրել:

Քարտի փակումից հետո դրանով նախքան փակումը կատարված գործարքների հաշվառման արդյունքում քարտին դրական մնացորդի առկայության դեպքում Բանկը մնացորդը փոխանցում է Ձեր՝ Բանկում ունեցած այլ հաշիվներին:

ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ

Բոլոր միջնորդավճարները և վճարները քարտային հաշվից գանձվում են ՀՀ դրամով: Արտարժութային քարտային հաշվի դեպքում Բանկն իրավունք ունի գործարքի կատարման օրը արտարժույթը փոխարկելու ՀՀ դրամի՝ տվյալ օրվա՝ իր կողմից սահմանված փոխարժեքով: Եթե քարտով իրականացված գործարքի արժույթը տարբերվում է քարտային հաշվի արժույթից, Բանկն իրավունք ունի փոխարկելու գործարքի արժույթը քարտի արժույթին՝ սակագնում նշված փոխարժեքով:

Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

Համաձայն «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի՝ Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Համաձայն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) միասնական հաշվետվողական ստանդարտի (CRS - Common Reporting Standard) պահանջների՝ Բանկը Ձեր՝ օտարերկրյա պետությունների (տարածքների) հարկային ռեզիդենտ հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Քարտի կորստի (գողության, զեղծարարության, առգրավման) դեպքում ձեռնարկվող քայլերն ու բլոկավորման և ապաբլոկավորման կանոնները

Քարտի կորստի (գողության) և զեղծարարության կասկածի դեպքում Քարտապանը պարտավոր է անմիջապես բլոկավորել քարտը և գրավոր դիմել Բանկ՝ քարտը վերաթողարկելու կամ փակելու համար:

Քարտապանը կարող է բլոկավորել քարտը՝

- Օնլայն բանկինգի միջոցով/Byblos Mobile հավելվածով
- ակտիվացնելով USSD ծառայությունը
- այցելելով Բանկի մասնաճյուղ (աշխատանքային օրերին ժամը 9:30-17:00)
- զանգահարելով Բանկ (աշխատանքային օրերին ժամը 9:00-18:00, հեռ.՝ +374 60 61 61 00)

Բանկը բլոկավորում է քարտը՝ ահազանգը ստանալուց և/կամ կասկածելի գործարք հայտնաբերելուց հետո 5-15 րոպեի ընթացքում: Մինչև քարտի կորստի (գողության) կամ զեղծարարության մասին Բանկին տեղեկացնելը քարտով կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

Բանկը կարող է բլոկավորել քարտը, եթե՝

- Քարտապանը նման խնդրանքով դիմել է Բանկ,
- Բանկը հայտնաբերել է քարտով կատարված կասկածելի/զեղծարար գործարք,
- Քարտապանն ունի չմարած պարտավորություններ Բանկի նկատմամբ:

Բանկն ապաբլոկավորում է քարտը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե՝

- Առկա է Քարտապանի գրավոր դիմումը, և գանձվել է ապաբլոկավորման համար Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարը,
- Բանկը Քարտապանից ստացել է հաստատում՝ քարտով կատարված գործարքների՝ ոչ զեղծարար լինելու մասին,
- Քարտապանը մարել է Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորությունները:

Քարտապանի կողմից չվավերացված օֆլայն գործարքները կասեցնելու նպատակով՝ Քարտապանի դիմումի համաձայն, Բանկը Mastercard վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը գրանցում է Mastercard միջազգային բլոկավորման համակարգում:

Քարտով կատարված գործարքի ժամանակ ի հայտ եկած խնդիրների (բլոկավորման, չսպասարկման, բանկոմատի կողմից թղթադրամի կամ քարտի առգրավման) կամ այլ միջադեպերի դեպքում Քարտապանը պետք է տեղեկացնի խնդրի վերաբերյալ՝ դիմելով Բանկի մասնաճյուղ կամ զանգահարելով վերոհիշյալ հեռախոսահամարով:

Բանկը, Քարտապանի գրավոր դիմումի համաձայն, կարող է ապաբլոկավորել զեղծարարության կասկածով բլոկավորված քարտը, որից հետո, սակայն, քարտի օգտագործման արդյունքում առաջացած հնարավոր վնասների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

Բանկոմատի կողմից քարտի առգրավման դեպքում Բանկը ճշտում է՝ արդյոք քարտը բանկոմատում է մնացել, և առաջարկում բլոկավորել այն: Քարտը կարող է առգրավվել 3 անգամ անընդմեջ սխալ PIN կոդ հավաքելու դեպքում, ինչպես նաև բանկոմատի կողմից քարտը վերադարձնելուց հետո 20-30 վայրկյանի ընթացքում քարտը չվերցնելու կամ բանկոմատի տեխնիկական խնդիրների պատճառով: Առգրավված քարտը ստանալու համար Քարտապանը դիմում է Բանկ՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Բանկի բանկոմատների կողմից առգրավված քարտը Քարտապանին է տրամադրվում առգրավման օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ՀՀ տարածքում գործող այլ բանկերի բանկոմատների կողմից քարտն առգրավելու դեպքում՝ Բանկին տեղեկացնելուց հետո առավելագույնը 1 ամսվա ընթացքում:

Թղթադրամի չտրամադրման դեպքում Քարտապանը գրավոր դիմում է ներկայացնում Բանկ, որից հետո Բանկը սկսում է գործարքի բողոքարկման գործընթացը:

Դեբիտ Քարտի հետ տրամադրվող օվերդրաֆտի պայմաններ (ՀՀ դրամով)			
Քարտի տեսակը	Մաստերքարտ World Elite	Մաստերքարտ Գոլդ	Մաստերքարտ Ստանդարտ
Գումար*	1,500,000 - 5,000,000 ՀՀ դրամ	400,000 - 5,000,000 ՀՀ դրամ	
Տրամադրում	անվճար		
Ժամկետ	1-12 տարի		
Տարեկան տոկոսադրույք ՀՀ դրամով	14.5%		15.5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք ՀՀ դրամով	**15.57 - 22.23%**		**16.72 - 17.79%**
Վճարման հաճախականություն**	Տոկոսագումարինը՝ ամեն ամիս, մայր գումարինը՝ Ձեր նախընտրությամբ՝ մինչև վարկի ժամկետի ավարտը		

*Օվերդրաֆտը տրամադրվում է փոխանցված զուտ աշխատավարձի հնգապատիկի չափով:
**Տույժերի առկայության դեպքում վերջիններս վճարվում են առաջին հերթին:

ՆՇՈՒՄ. Եթե օվերդրաֆտը սքորինգի հիման վրա (ավտոմատ) չի հաստատվում, տարեկան անվանական տոկոսադրույքը սահմանվում է 0.25%-ով բարձր:
Օվերդրաֆտի հիմնական պայմաններից (ժամկետ, գումարի չափ, վարկ/գրավ հարաբերակցություն և այլն) շեղվելու դեպքում տարեկան անվանական տոկոսադրույքը կարող է սահմանվել 0.25%-ով բարձր:

Ստորև ներկայացված է տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

- Քարտի տեսակ՝ Մաստերքարտ Գոլդ
- Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 08/08/22
- Օվերդրաֆտի ժամկետ (ամիսներ)՝ 144
- Օվերդրաֆտի գումար՝ 1,500,000 ՀՀ դրամ
- Տարեկան տոկոսադրույք՝ 14%
- Ամսական միջնորդավճար՝ 250 ՀՀ դրամ
- Կանխիկացման միջնորդավճար ԲԲԱ-ից՝ 0%
- Փոխանցվող աշխատավարձ՝ 300,000 ՀՀ դրամ
- Տարեկան փաստացի տոկոսադրույք (կանխիկ)՝ 15.16%
- Տարեկան փաստացի տոկոսադրույք (անկանխիկ)՝ 15.16%

Ուշադրություն

Ձեր կողմից տոկոսագումարների և օվերդրաֆտի գումարի մարումները ժամկետին չկատարելու դեպքում Ձեր մասին տեղեկությունը կգրանցվի ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրում և վարկային բյուրոներում, ինչը կարող է վատ ազդեցություն ունենալ Ձեր վարկային պատմության վրա և հետագայում խոչընդոտ հանդիսանալ վարկ ստանալու համար: Պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում Ձեր գույքը կարող է բռնագանձվել օրենքով սահմանված կարգով:

Քարտի տեսակը	Mastercard Business	Mastercard World Elite*****	Mastercard Gold	Mastercard Standard	Mastercard Digital	Arca Gold
Արժույթ*	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար,եվրո	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար,եվրո	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար,եվրո	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար,եվրո	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար,եվրո	ՀՀ դրամ
Քարտի թողարկում	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*
Սպասարկման վճար (տարեկան)	15,000 ՀՀ դրամ	7,000 ՀՀ դրամ (ամսական) 77,000 ՀՀ դրամ (տարեկան)	12,000 ՀՀ դրամ	4,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	4,000 ՀՀ դրամ
Կից քարտերի սպասարկման վճար (տարեկան)	6,000 ՀՀ դրամ	7,000 ՀՀ դրամ (ամսական) 77,000 ՀՀ դրամ (տարեկան)	12,000 ՀՀ դրամ	4,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	4,000 ՀՀ դրամ
Քաղվածքի տրամադրում (յուր. ամիս)	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*
Հավելյալ քաղվածքի տրամադրում (ներառյալ ԱԱՀ)	*անվճար*	*անվճար*	*անվճար*	500 ՀՀ դրամ	*անվճար*	500 ՀՀ դրամ
Քարտի փոխարինում և վերաթողարկում (անվան փոփոխման, քարտի կորստի, վնասման դեպքում)	5,000 ՀՀ դրամ	7,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ	2,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
Նոր PIN-ի տրամադրում	5,000 ՀՀ դրամ	7,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	1,500 ՀՀ դրամ	-	1,000 ՀՀ դրամ
Pin կոդի վերականգնում բանկոմատի միջոցով	1,000 ՀՀ դրամ	*անվճար*	1,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	-	500 ՀՀ դրամ
Կանխիկացում ԲԲԱ բանկոմատներում	0.3%	0%	0.3%	0.3%	0.3%	0.3%
Կանխիկացում ԲԲԱ կանխիկացման կետերում՝ կանխիկ մուտքագրման դիմաց	0.3%	0%	0.3%	0.3%	0.3%	0.3%
Կանխիկացում ԲԲԱ կանխիկացման կետերում ՀՀ դրամով՝ անկանխիկ մուտքագրման դիմաց	0.3%	0%	0.3%	0.3%	0.3%	0.3%
Կանխիկացում ԲԲԱ կանխիկացման կետերում ԱՄՆ դոլարով և եվրոյով՝ անկանխիկ մուտքագրման դիմաց	1.5%	1.5%	1.5%	1.5%	1.5%	-
Կանխիկացում Arca համակարգի և հայկական այլ բանկերի բանկոմատներում**	1%	0%	1%	1%	1%	1%
Կանխիկացում արտերկրի բանկերի բանկոմատներում	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	0%	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	-
Կանխիկացում Arca համակարգի և հայկական այլ բանկերի կանխիկացման կետերում	1%	1%	1%	1%	1%	1%
Կանխիկացում արտերկրի բանկերի կանխիկացման կետերում	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	2.5 % նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	2% նվզ՝ 2,500 ՀՀ դրամ	-
Կանխիկի մուտքագրում Բիբլոս Բանկ Արմենիայի բանկոմատների միջոցով	0%	0%	0%	0%	0%	0%
Կանխիկի մուտքագրում Arca համակարգի բանկոմատների միջոցով	0.62%	0.62%	0.62%	0.62%	0.62%	0.62%
Օվերդրաֆտի հնարավորություն	առկա է	առկա է	առկա է	առկա է	առկա է	առկա չէ
Օվերդրաֆտների վճարների ուշացման տույժ (տարեկան)	-	24%	24%	24%	24%	-
Քարտից քարտ կատարվող փոխանցումներ	0.5%	0.5%	0.5%	0.5%	0.5%	0.5%
Քարտի բլոկավորում	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*
Քարտի ապաբլոկավորում	1,000 ՀՀ դրամ	*անվճար*	3,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ	1,000 ՀՀ դրամ
Քարտի ապաբլոկավորում օնլայն	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*
Գործարքի ոչ ճիշտ վիճարկում***	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ
Mastercard-ի «Stop List»-ում քարտի պահպանում 2 շաբաթ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	15,000 ՀՀ դրամ	-
1 SMS հաղորդագրություն	20 ՀՀ դրամ	≥ 5,000 անվճար****	20 ՀՀ դրամ	20 ՀՀ դրամ	20 ՀՀ դրամ	20 ՀՀ դրամ
Push ծանուցում	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*
3D Secure/USSD SMS հաղորդագրություն	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*	*անվճար*
1 օրվա ընթացքում կանխիկացման գործարքների քանակը	10	15	10	10	-	7
1 օրվա ընթացքում թույլատրվող կանխիկացման գործարքների ընդհանուր առավելագույն գումարը	1,000,000 ՀՀ դրամ 3,000 ԱՄՆ դոլար 2,000 եվրո	3,000,000 ՀՀ դրամ 6,000 ԱՄՆ դոլար 6,000 եվրո	1,000,000 ՀՀ դրամ 3,000 ԱՄՆ դոլար 2,000 եվրո	500,000 ՀՀ դրամ 2,000 ԱՄՆ դոլար 1,500 եվրո	-	500,000 ՀՀ դրամ
1 օրվա ընթացքում կատարվող գործարքների ընդհանուր քանակը	20	25	20	20	-	15
1 օրվա ընթացքում թույլատրվող գործարքների ընդհանուր առավելագույն գումարը	3,000,000 ՀՀ դրամ 6,000 ԱՄՆ դոլար 6,000 եվրո	50,000,000 ՀՀ դրամ 100,000 ԱՄՆ դոլար 100,000 եվրո	3,000,000 ՀՀ դրամ 6,000 ԱՄՆ դոլար 6,000 եվրո	2,000,000 ՀՀ դրամ 4,000 ԱՄՆ դոլար 4,000 եվրո	3,000,000 ՀՀ դրամ 6,000 ԱՄՆ դոլար 6,000 եվրո	750,000 ՀՀ դրամ
Օդանավակայանների բիզնես սրահների մուտքի հնարավորություն	-	*անվճար******	15,000 ՀՀ դրամ (յուր. մուտքի համար)	-	-	-
Դրական մնացորդի վրա կուտակվող տոկոս*******	0-7%	0-7%	0-7%	0-7%	0-7%	0-7%

*Քարտի արժույթից տարբերվող արտաժույթային գործարքները փոխարկվում են Բիբլոս Բանկ Արմենիայի կողմից սահմանված փոխարժեքով ±1 ՀՀ դրամ:

**Ինեկոբանկ ՓԲԸ բանկոմատներից և կանխիկացման կետերից Apple Pay կամ Google Pay համակարգերի միջոցով գումար կանխիկացնելիս գանձվում է միջնորդավճար՝ համաձայն արտերկրում կանխիկացման համար սահմանված համապատասխան սակագնի:

***Հետաձգման պահանջները պետք է ներկայացվեն քացվածքը ստանալու օրվանից առնվազն 15 օրացույցային օրվա ընթացքում: Բանկը պարտավոր է Քարտապանի դիմումն ընդունել նաև, եթե Քարտապանի կողմից չվավերացված գործարքները բողոքարկվում են Քարտապանի կողմից քաղվածքը ստանալու պահից 55 օրացույցային օրվա ընթացքում, եթե Քարտապանը բողոքարկման դիմումին կից ներկայացնում է պահանջը՝ 15 օրացույցային օրվա ընթացքում ներկայացնելու անհնարինությունը հավաստող փաստաթղթեր:

****Հաճախորդի կողմից 5,000 ՀՀ դրամից (կամ համարժեքը) պակաս գումար նախընտրելու դեպքում,1 SMS հաղորդագրության համար կգանձվի 20 ՀՀ դրամ:

*****ՄաստերՔարտ World Elite-ին կցված քարտի համար կիրառելի են գործող պայմանները ըստ քարտատեսակի: Կից քարտի արժույթը պետք է համապատասխանի մայր քարտի արժույթին:

******Ծրագրի մանրամասները հասանելի են Բիբլոս Բանկ Արմենիայի կայքում (byblosbankarmenia.am):

*******Հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվեգրվող տոկոսադրույքը Բանկի կողմից կարող է սահմանվել ավել քան տարեկան 0%-ը՝ հիմք ընդունելով հաճախորդի հաշվի փաստացի կամ ակնկալվող շրջանառության չափերը կամ հաճախորդի հետ համագործակցության ծավալը և բնույթը:

ՆՇՈՒՄ: Քարտի գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում գանձված սպասարկման վճարը չի վերադարձվում: Ամսական սպասարկման վճարով Mastercard Gold, Mastercard Standart և Arca Gold գործող քարտերի համար կկիրառվի վաղաժամկետ փակման տույժ՝ 3000 ՀՀ դրամ: Ամսական սպասարկման վճարով World Elite Mastercard քարտերի՝ առաջին 3 ամսվա ընթացքում փակվելու դեպքում կգանձվի տույժ՝ 20,000 ՀՀ դրամ:

Թարմացված՝ 30.12.2025թ.

ԲԻԲԼՈՍ ՕՆԼԱՅՆ

Չափազանց զբաղվա՞ծ եք բանկ այցելելու համար, և Ձեզ հարկավոր է շուրջօրյա հասանելիություն բանկային ծառայությունների՞ն:

Բիբլոս Բանկ Արմենիան առաջարկում է հարմար տարբերակ՝ լուծելու Ձեր բոլոր խնդիրներն Օնլայն բանկինգի և Byblos Mobile հավելվածի միջոցով՝ առանց Բանկ այցելելու:

1

ԻՆՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՀԱՍԱՆԵԼԻ ԲԻԲԼՈՍ ՕՆԼԱՅՆԻ ՄԻՋՈՑՈՎ

Բիբլոս Օնլայն համակարգը թույլ է տալիս ցանկացած պահի ապահով և անվտանգ օգտվել բազմաթիվ բանկային ծառայություններից և կատարել մի շարք գործարքներ՝

- ստուգել հաշիվների մնացորդը, բացել հաշիվներ,
- ներդնել ավանդ
- պատվիրել քարտ
- կատարել դրամական միջոցների փոխանցում,
- ձակերպել ավանդ, մարել Բիբլոս Բանկ Արմենիայում և այլ բանկերում ունեցած վարկերը,
- դիտել տարադրամի փոխարժեքը, կատարել տարադրամի փոխանակում,
- վճարել ՃՈ տուգանքները և կայանատեղիների վարձը,
- ստուգել քարտային հաշիվների մնացորդը, տեսնել հաշվի քաղվածքը, գործարքները և այլն:

2

ԱՆՎՏԱՆԳ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ՝ 24/7 ՌԵԺԻՄՈՎ

Անվտանգությունը ցանկացած ինտերնետ օգտագործողի համար գերակա խնդիր է, դա առաջնային է նաև մեզ համար: Ուստի Բիբլոս Բանկ Արմենիան ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումները՝ Ձեր ֆինանսական տվյալների առավելագույն անվտանգությունն ապահովելու համար:

Մի քանի օգտակար խորհուրդ, թե ինչպես կարելի է ապահովել Ձեր տվյալների անվտանգությունը.

- Ընտրեք հուսալի, ոչ պարզ գաղտնաբառ, որը կպարունակի մեծատառեր, փոքրատառեր, թվեր, հատուկ նշաններ;
- Մի տրամադրեք Ձեր գաղտնաբառն այլ անձանց;
- Ունեցեք հակավիրուսային ծրագիր և կանոնավոր թարմացրեք այն:

3

ԻՆՉՊԵՍ ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Բիբլոս Օնլայն ծառայությունը հասանելի է 24/7 ռեժիմով, իսկ այն ակտիվացնելն ու դրանից օգտվելը դյուրին է ու արագ:

Ֆիզիկական անձինք կարող են ակտիվացնել ծառայությունը՝ այցելելով կամ ներբեռնելով Byblos Mobile հավելվածը և հետևելով գրանցման պարզ քայլերին:

1. Ներբեռնել Byblos Mobile հավելվածը և սեղմել «Առցանց գրանցման» վրա

2. Ընտրել նույնականացման եղանակը, ծանոթանալ անձնական տվյալների մշակման և հավաքագրման պայմաններին

3. Սկանավորել անձը հաստատող փաստաթուղթը և հաստատել (հուշում. փորձեք խուսափել փաստաթղթի վրա լույսի արտացոլանքից)

4. Սկանավորել դեմքը, ժպտալ, նայել ներքև ու վերև

5. Մուտքագրել էլ. փոստի հասցեն, սեղմել «Վավերականացնել» կոճակը, այնուհետև մուտքագրել էլ. հասցեին ստացված կոդը և հաստատել այն

6. Մուտքագրել հեռախոսահամարը, սեղմել «Վավերականացնել» կոճակը, այնուհետև մուտքագրել հեռախոսահամարին ստացված կոդը, հաստատել այն

7. Մուտքագրել KYC («Ճանաչիր քո հաճախորդին») և FATCA տվյալները, ծանոթանալ հաշվի բացման և վարման պայմաններին ու հաստատել

8. Ստեղծել Օնլայն/մոբայլ բանկինգ ծառայության մուտքանուն և գաղտնաբառ (հուշում. ծածկագիրը պետք է պարունակի ոչ պակաս, քան 10 նիշ, այդ թվում՝ մեծատառ, փոքրատառ, թիվ և սիմվոլ), ընդունել սպասարկման պայմանները և հաստատել

9. Ստեղծել վեցանիշ կոդ՝ հետագայում համակարգ մուտք գործելու համար:

Եթե ցանկանում եք հավելված մուտք գործել բիոմետրիկ տվյալներով՝մատնահետքով/FaceID-ով, ապա անհրաժեշտ է միացնել բիոմետրիկ նույնականացումը:

Այն հաշվետերերը, որոնք վերջին 14 ամսվա ընթացքում Բանկում ունեցած իրենց որևէ հաշվով չեն կատարել ոչ մի գործարք, կարող են գրանցվել օնլայն բանկինգում, սակայն կատարված գործարքները ենթակա կլինեն մասնաճյուղի կողմից հաստատման: Եթե հաճախորդը մասնաճյուղում է, ապա առաջին հերթին կակտիվանա նրա հաշիվը, այնուհետև կտրամադրվի օնլայն բանկինգի հասանելիություն:

Իրավաբանական անձինք ծառայությունն ակտիվացնելու համար պետք է այցելեն Բանկի մասնաճյուղ (առկայության դեպքում՝ կնիքով) և կատարեն հետյալ քայլերը.

- Ստորագրել Բիբլոս Օնլայնի դիմումի ձև ընդունել պայմանները,
- Ընտրել հասանելիության ձևը և վճարել ծառայության արժեքը,
- Այցելել Օնլայն բանկինգ հարթակ կամ ներբեռնել Byblos Mobile հավելվածը,
- Գրանցվել և ընդունել սպասարկման պայմանները,
- Ստեղծել վեցանիշ կոդ՝ հետագայում համակարգ մուտք գործելու համար,
- Մուտքագրել էլ. փոստի կամ SMS հաղորդագրության միջոցով ստացված կոդը:

ՆԵՐԲԵՌՆԵՔ ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ

ՆՇՈՒՄ. Գաղտնաբառը մոռանալու դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են այն վերականգնել առանց Բանկ այցելելու:

ԻՆՉ ԿԱՐԺԵՆԱ

Անվանումը

Ֆիզիկական անձ (ակտիվացում)*	***անվճար***
Ֆիզիկական անձ՝ գործարքային	***անվճար***
Ֆիզիկական անձ՝ միայն դիտելու իրավասությամբ**	***անվճար***
Իրավաբանական անձ/ԱՁ (ակտիվացում)*	1,000 ՀՀ դրամ
Իրավաբանական անձ/ԱՁ՝ գործարքային, մինչև 2 օգտատեր (ամսական)	1,500 ՀՀ դրամ
Իրավաբանական անձ/ԱՁ՝ գործարքային, լրացուցիչ օգտագործող (ամսական)	200 ՀՀ դրամ
Իրավաբանական անձ/ԱՁ՝ միայն դիտելու իրավասությամբ (ամսական)	200 ՀՀ դրամ

*Ներառյալ ԱԱՀ

**Միայն դիտման հասանելիություն ունեցող հաշվետերերը կարող են անվճար անցնել գործարքային ռեժիմի հավելվածի կամ օնլայն բանկինգի միջոցով: